



CCHC-ի չներկայանալու կանոնակարգի ճանաչում

Ձեզ բժշկական ծառայություններ մատուցող աշխատակիցները ցանկանում են համոզվել, որ Ձեզ և մյուս հիվանդներին անհրաժեշտության դեպքում բժշկական օգնությունը հասանելի է: Մեր բոլոր հիվանդներին բժշկական ծառայությունների առավելագույն հասանելիություն ապահովելու համար, խնդրում ենք տեղեկացված լինել հետևյալ Ժամադրության կանոնակարգին:

Պլանավորված ժամադրություններ: Չնայած որ մենք բոլոր ջանքերը կգործադրենք հեռախոսով կամ էլ փոստով Ձեզ հիշեցնելու առաջիկա բժշկական ժամադրության մասին, ակնուամենայնիվ Դուք եք պատասխանատու Ձեր ժամադրության օրն ու ժամը հիշելու համար:

Ժամադրությունների հաստատում: Մենք Ձեզ կգանգահարենք Ձեր տրամադրած համար(ներ)ով Ձեր պլանավորված ժամադրությունից առնվազն երկու օր առաջ՝ հավաստիանալու, որ Դուք դեռ ցանկանում եք պահել այդ ժամադրությունը: Եթե ձայնային փոստը միանա, մենք Ձեզ հաղորդագրություն կթողնենք՝ խնդրելով մեզ ետ գանգահարել ոչ ուշ, քան մինչև հաջորդ օրվա կեսօրը՝ հաստատելու ժամադրությունը պահելու Ձեր մտադրությունը:

Ժամադրությունների չեղարկում: Եթե Դուք չեք կարող ներկայանալ Ձեր պլանավորված ժամադրությանը, ապա պետք է մեզ գանգահարեք առնվազն 12 ժամ շուտ որպեսզի մեզ տեղյակ պահեք, և մենք կարողանանք Ձեր ժամադրությունը մեկ այլ հիվանդի առաջարկել:

Ուշացում ժամադրություններից: Եթե Դուք ժամադրությունից ուշանաք ավելի, քան 10 րոպե, ապա Ձեր ժամադրությունը կարող է տեղափոխվել կամ Ձեզ կընդունեն որպես նախօրոք չպայմանավորված հիվանդ՝ հերթի կարգով:

Բաց թողնված ժամադրություններ: Բժշկական ծառայությունների հասանելիության պակասի պատճառով, բաց թողնված ժամադրություններին շատ խիստ են վերաբերվում: Եթե Դուք մեկ ժամադրություն բաց թողեք, ապա դա կգրանցվի որպես ժամադրության բացթողում: Մենք կապ կհաստատենք Ձեզ հետ՝ ժամադրությունը տեղափոխելու համար:

Եթե Դուք երկրորդ ժամադրությունը բաց թողեք, առանց նախնական ծանուցման վեց ամսվա ընթացքում, սույն կանոնակարգի ծանուցման նամակը կուղարկվի Ձեզ:

Վեց ամսվա ընթացքում ժամադրությունների երեք անընդմեջ բացթողումներից հետո, Դուք այլևս հնարավորություն չեք ունենա ժամադրություններ ձեռք բերել կլինիկայի հետ: Երկու առանց պայմանավորվածության այցերից հետո, Դուք իրավունք կունենաք ժամադրություն ձեռք բերել:

Խնդրում ենք չներկայանալու կանոնակարգի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խոսել բժշկական անձնակազմից որևէ մեկի հետ:

Ես հասկանում եմ և համաձայն եմ գործել ըստ սույն չներկայանալու կանոնակարգի

Հիվանդի ստորագրություն

Ամսաթիվ